ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Քաղաք ***17.02. 2015 թ. ժամը 11.00***

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 88-ը:

Մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Կարեն Իսախանյանը, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Սերգեյ Ազարյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի զինկոմները, իրավապահ մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2014 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների և 2015 թվականի ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքների մասին:
   /Զեկ. Տիգրան Հակոբյան - մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ/

2. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կառավարման ոլորտում գործող միգրացիոն պետական ծառայության կողմից իրականացվող մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների Ռուսաստանի Դաշնություն մուտքի թույլտվություն ստանալու գործընթացի մասին:
   /Զեկ. Սևակ Խլղաթյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար/

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2014 թվականի 4-րդ եռամսյակի վարչական հսկողության արդյունքների և 2015 թվականի անելիքների մասին:
   /Զեկ. Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության 2014 թվականի կատարած աշխատանքների մասին:
   /Զեկ. Վերգինե Ղուկասյան - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ/

5. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Վաչե Տերտերյանը - ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ՖՔՏՔ վարչության պետ

Վանիկ Գևորգյանը - Սարուխան համայնքի ղեկավար

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. **Առաջարկել մարզի համյանքների ղեկավարներին՝**

1) մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների Ռուսաստանի Դաշնություն մուտքի թույլտվություն ստանալու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողովներ: Մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների Ռուսաստանի Դաշնություն մուտքի թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դիմումները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմ.

2) միջոցներ ձեռնարկել մարզի համայնքներում վարչական հսկողության արդյունքում վեր հանված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ.

3) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման, աշխատավարձերի գծով նախորդ տարիների կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և ապահովել դրանց ցուցանիշները.

4) մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել պարարտանյութի, սերմացուի և դիզվառելիքի անհրաժեշտ քանակի մասին հայտերը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ